ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՆ ՄԻՋԱԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ (ԳՈՐԾՈՒՂՈՒՄ ԳՐԱՑ)

Հյուսիսային համալսարանը TEMPUS-VERITAS ծրագրի շրջանակում ներկայումս իր ակտիվ մասնակցությունն է ցուցաբերում ասպիրանտական կրթության բարեփոխումների

գործընթացում: Հետբուհական կրթական համակարգի բարեփոխումներին արդյունավետ մասնակցությունը համալսարանին պարտավորեցնում է առաջին հերթին այն առումով, որ այն ՀՀ-ում գործող մասնավոր բուհերից միակն է, որին վստահված է TEMPUS–VERITAS ծրագրի շրջանակում հանդես գալու ասպիրանտական կրթական բարեփոխումների միջազգային հարթակում: Եվ դրա վառ վկայությունը հանդիսացավ Ավստրայում, Գրացի սերվիզի համալսարանում պրոֆ. Արմեն Ճուղուրյանի և Մարգարիտա Պողոսյանի նեկայացուցչական պրեզենտացիան, նվիրված ոչ միայն Հյուսիսային համալսարանում մեկնարկած ասպիրանտական կրթության ընթացքին, այլև հետբուհական կրթության բարեփոխումների շրջանակում համալսարանի կողմից ներկայացվող առաջարկներին:

Հատկապես, միջազգային փորձագետների կողմից հավանության արժանացան Հյուսիսային համալսարանի պատվիրակների կողմից

ներկայացված այն վերլուծությունները, որոնք առնչվում էին Զալսբուրգյան սկզբունքներին համահունչ ասպիրանտական կրթության բարեփոխումների ընթացքին, “գիտություն-բուհ-աշխատաշուկա” համագործակցության շղթային, գիտական նորամուծությունների վաճառահանման և ասպիրանտուրայի կազմակերպման ֆինանսական կայունության ապահովման հիմնա-խնդիրներին:

Հաշվի առնելով հետբուհական կրթական բարեփոխումների շրջանակում Հյուսիսային համալսարանի կողմից ցուցաբերվող ակտիվությունը, TEMPUS-VERITAS ծրագրային դրույթների պահանջով, 2015թ. գարնանը համալսարանում կմեկնարկի ասպիրանտական կրթության պիլոտային ծրագիր, որտեղ հետբուհական ուսուցումը կկազմակերպվի միջազգային չափանիշներով՝ Զալսբուրգ-յան սկզբունքներին համա-հունչ: